

**ՁԵՌԱԳԻՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ «ԼՈՒԾՄՈՒՆՔԻ»
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ԺԵ. ԴԱՐ)**

Բանասիր. գիտ. թեկնածու Տ. Ղ. Միրունյան

Հիմնադրամ: Ձեռագիր, Առաքել Սյունեցի, քերականություն, Մատենադարան, ձեռագիր քերականություն:

Ձեռագրագիտական տեղեկություններ

Աշխատությունը Երևանի Մատենադարանում պահվում է երեք ձեռագրերում՝ ՄՄ 55, 1931, 4132: Առաջինը՝ ՄՄ 55-ը, քերականական և աստվածաբանական նյութերի ժողովածու է՝ գրված 1489 թ. Երզնկայի Սուրբ Հակոբ վանքում: ՄՄ 1931 և ՄՄ 4132 ձեռագրերի գրչության ժամանակի և վայրի մասին ստույգ տեղեկություններ չկան, թվագրվում են ԺԵ. դարով՝ ըստ արտաքին հատկանիշների (գրատեսակ, գրանյութ). Սրանք ևս ժողովածուներ են՝ բաղկացած տարբեր նյութերից: Քերականական երկն ունի «Լուծմունք յաղագս քերականութեան» կամ «Յաղագս քերականութեան լուծմունք» խորագրերը, հեղինակն անհայտ է: ՄՄ 55 ձեռագրի քերականության վերջին հատվածը (սկսած մակբայից) պակասում է, մյուս երկու բնագրերն ամբողջական են և միանգամայն նույնը: Ուսումնասիրության համար ընտրվել է ՄՄ 1931 ձեռագիրը՝ հաշվի առնելով, որ գրությունն ավելի հստակ է և ճշգրիտ. ըստ անհրաժեշտության մյուս ձեռագրերի հետ կատարվել են համեմատություններ:

* * *

Այս քերականությունը կառուցված է ավանդական գլխակարգությամբ, պարունակում է Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչից (այսուհետև՝ Թարգմանիչ) և առաջին մեկնիչներից ավանդված մասերը (ինչպես՝ «Նախերգանը», որ կիրառության մեջ

է Դավիթ քերականից սկսած)¹: Բուն աշխատանքը, չնայած բոլոր ենթավերնագրերի առկայությանը, չունի նույնչափ հետևողական բովանդակություն:

«Նախերգանք» կազմված է Առաքել Սյունեցու քերականության առաջաբանի ազատ խմբագրությամբ², ընտրովի հատվածները, սակայն, ճշտությամբ չեն արտացոլում սկզբնաղբյուր շարադրանքի հաջորդականությունը. Քերականության մասին Սյունեցու հիշատակած 12 դիտարկումներից ընտրվել են մի քանիսը՝ 4-րդը, 11-րդը, ապա 8-րդը³, այդպիսով՝ նաև խախտվել է շարադրանքի տրամաբանությունը, հեղինակը նախ տալիս է Դիոնիսիոսի քերականության ավանդման պատմությունը, թե ինչպես բազում գրվածքներից պահպանվեց միայն նրա երկը, իսկ հայ մեկնիչներին հիշում է քերականության օգտակարությունը պարզաբանելուց հետո:

Հմմտ.՝ «Գրականութեան արուեստս ասեն, թէ բազումք են արարեալ, բայց անուանի Հոմերոս եւ Իսիդորոս են արարեալ, յետ նոցա այլք բազումք են արարեալ անթիւ, զոր Հերոդիանոս որդի Ապողինարի՝ իշխան, զամենայն գրեալսն ցրուեաց, միայն այս մնաց ի Դիոնէսի[ոս] ասացեալ, որ էր կռապաշտ իմաստասէր» (ՄՄ 1931, 89ա): «Չորրորդ՝ թէ ո՞վ ոք էր սահմանող քերականութեանն: Ա՛յս է. զի քերականութեան արհեստս նախ Հոմերոս եւ Իսիդորոս

¹ Քննարկվող քերականության կառուցվածքն՝ ըստ մասերի. [«Նախերգանք», [«Յաղագս քերականութեան»], «Յաղագս վերծանութեան քերդած», «Յաղագս ոլորակի», «Յաղագս կիտից», «Յաղագս հագներգութեան», «Յաղագս տառից», «Յաղագս վանգի», «Յաղագս յերկար փաղառութեան», «Յաղագս սուղ փաղառութեան», «Յաղագս շաղաշարաց», «Յաղագս բառի», «Յաղագս բանի», «Յաղագս անուան», «Յաղագս բայի», «Յաղագս լծորդութեան», «Յաղագս ընդունելութեան եւ յաղագս ի յօր», «Յաղագս դերանուան», «Յաղագս նախադրութեան», «Յաղագս մակբայի», «Յաղագս շաղկապի», «Յաղագս առոգանութեան», «Յաղագս ոտին»:

² Այս մասին տե՛ս նաև Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 350-51:

³ Սրանք ձևակերպել են նախորդ քերականները, տե՛ս Գ. Զահուկյան, «Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը» // «Բանբեր Մատենադարանի», N 3, Երևան, 1956, էջ 246: Յովհաննէս Երզնկացի, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անճելըս, 1983, էջ 89-99: Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Ե., 1966, էջ 55-61 ևն. նրանց հաղորդած տեղեկությունները 12 կետի մեջ ամփոփել է Առաքել Սյունեցին:

հոչակաւոր իմաստասէրք. նոքա արարին զքերականութիւնս որ ի շորիշ, եւ ո՛չ՝ ի միասին: Եւ յետ նոցա բազում ք արարին յինքեանց քերականութիւն, եւ ի յոյժ բազութենէն խառնեալ՝ ոչ գիտէին, թէ ո՛ր՝ յորոց է ասացեալ,- մինչեւ ի ժամանակս քրիստոնէութեան որդին Ապողինարի Հերովդիանոս անուն իմաստասէր եւ իշխան: Նա ժողովեաց զամենայն գրեանսն քերականութեան եւ արեաց եւ կորոյս եւ միայն եթող զԴիոնի[սի]ոսին Թրակացոյ, որ էր կռապաշտ իմաստասէր...»⁴:

«Իսկ քերականաւ գուտ է, որ զլեզուն դորդ պահէ, որ ծոիոչ, եւ զընթեռնուլն, որ զգիր քնքերական արուեստիւ առոգանութեամբ գիտենայ կարդալ, և զգիրն արուեստիւ գիտենայ գրել, թէ յորտե՞ղ պիտի դնել շեշտ, բութ, պարոյկ, ենթամնայ եւ այլն» (անդ):- «Մետասաներորդ՝ եթէ առ ի՞նչ աւգտակարութիւն էս ապիտանացու: Դարձեալ՝ աւգուտ է, որ զլեզուն ուղղորդ պահէ, որ ծոի ոչ: Եւ զընթեռնուլն, որ զգիրքն քերական արուեստիւ ն առոգանութեամբ գիտենայ կարդալ եւ զգիրն արուեստիւ գիտենայ գրել, թէ որտե՞ղ պիտի դնել շեշտ եւ բութ եւ պարոյկ եւ ենթամնայ եւ այլն»⁵:

«Իսկ մեկնեալ է զքերականութիւնս Դաւիթ փիլիսոփայն, որ եւ թարգմանեալ է, իսկ յետ նորա Գրիգոր Մաքիստոս՝ արձակ, և յետ նորա Պլուզ վարդապետն կարճեցուցեալ է, և յետ նորա Եսաի վարդապետն, իսկ յետ նորա այլ կարճ Ծործորեցի Յովհաննէս վարդապետն» (անդ):- «Ութերորդ՝ թէ յումե՞թ թարգմանեցաւ և ո՞վ էր, որ մեկնութիւն արար սորա, այսինքն՝ զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց եւ մեկնեաց զսա: Իսկ յետ նորա Գրիգոր Մագիստրոս այլ ընդարձակ մեկնեաց զԴաւթի մեկնեալն: Իսկ յետոյ Յովհաննէս վարդապետն մականուն Պլուզ համառատեաց զնոյն վասն դիւրալուր լինելոյ: Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գլաձորոյ այ

⁴ *Առաքել Միւնեցի*, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, Լոս Անճելոս, 1982, էջ 71: Աբողինարի որդի Հերովդիանոսի մասին հիշատակությունը որոշ աղճատմամբ վերցված է Դավիթ Քերականից, տե՛ս Գ. *Ջահուկյան*, անդ, էջ 246:

⁵ *Առաքել Միւնեցի*, անդ, էջ 74:

լիամառատեաց գնոյն, որ այժմս կայ ի միջի, այսպէս եւ Օործորեցին է համառատեալ»⁶:

Այնուհետև ներածական այլ տեղեկություններ հաղորդվում են, կարելի էասել, տարերային կերպով՝ առանց թեմաների որոշակի կարգավորության, այսպէս, մարդու՝ մարմին և հոգի բաղկացության համաբանությամբ բանը դիտվում է իբրև «ներտրամադրեալ և յառաջաբերական» (ներքին և արտաբերական)⁷, ապա անմիջապէս անդրադարձ է արվում ստուգաբանությանը, նշվում, որ «ի յամենայն ազգ լեզու չառնու ստուգաբանութիւն», իսկ «քաղդիացիքն գիտէին և այլն, որ ուսան: Չայնակից և քմակից գրեր՝ հաց պիտի ասել խաց ասեն և այլն» (անդ): Մա, ըստ երևութին, քերականական տարբեր տեքստերից քաղված միտք է. քաղդեացիները, որոնց կարծես ընծայվում է լծորդ հնչյունների իմացություն, ըստ Հովհաննէս Երզնկացու՝ առաջիններից էին, որ ստեղծեցին ինքնուրույն գիր⁸, իսկ *h-hu* ուղղախոսական շեղումը հիշատակել է Գրիգոր Մագիստրոսը այլ առիթով՝ նկատի ունենալով բարբառային թյուրացած ձևերը, որոնք հղկելու է կոչված քերականությունը⁹:

Քերականության ըմբռնումը հիմնված է Թարգմանչի հաղորդած նախնական գիտելիքի վրա¹⁰՝ «Քերականութիւն է հմտութիւն» (անդ, 89բ), բայց նաև չի անտեսված բանականության դերը: Հեղինակը հմտությունը հավասարեցրել է ուսմանը, այդպիսով՝ կարծես նաև տեղ տալով քերականության բանական հիմունքին՝ այն, ինչ պակասում էր Թարգմանչի տեքստում և հաստատվել էր դեռևս առաջին մեկնիչների կողմից¹¹. «Հմտութիւնն ուսումն է, որ ի կարդալոյն և ի գրելոյն յառաջ գայ, որ քերդողութիւնքն՝ տաղ, ոտանա-

⁶ *Առաքել Միւնեցի*, անդ, էջ 73:

⁷ Հմմտ.՝ անդ, էջ 181:

⁸ Տե՛ս *Յովհաննէս Երզնկացի*, անդ, էջ 90:

⁹ Տե՛ս Ն. *Աղոնց*, Երկեր, հ. Գ, *Գրիգոր Մագիստրոս*, Մեկնութիւն քերականին, Ե., 2008, էջ 224. Ուղղախոսական այս դիտողությունը կրկնում են հետագա այլ քերականներ (Հովհաննէս Երզնկացի, Եսայի Նչեցի ևն):

¹⁰ Տե՛ս Ն. *Աղոնց*, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 1:

¹¹ Տե՛ս Գ. *Ջահուկյան*, անդ, էջ 246-47: Ն. *Աղոնց*, անդ, Մովսէս Քերդողի մեկնութիւն քերականին, էջ 159:

ւորք, գիրք շինեալ և այլ ստեղծուած, որ իմաստունք առնեն, այս-
ինքն՝ քերական և այլ հին պատմութիւն և շարագրութիւնք կար-
դացեալ և հմտացեալ, կարեն զամենայն բան պատասխանել» (անդ):

Քերականությանը հատկացված մասերի նկարագրության մեջ
հեղինակը առասպելների տեսակները ներկայացնում է՝ ըստ Ստե-
փանոս Սյունեցու, այսինքն՝ «պիտակ» կամ սուտ, պարսավական և
փոխաբերական, բայց նաև ընդարձակում է նյութը և պատմում այն
գրույցներն ու առակները, որոնք միայն անվանապես էր հիշել Սյու-
նեցին¹²:

Հմտ.՝ «Փոխարկութեան, որ խրատէ աւգուտ, որ զայլ կեն-
դանեաց բարք, ի վերայ իւրոց փոխեն օգտին, որպէս նապաստակքն
ասացին, թէ ամէն կենդանի մեզ թշնամի է՝ մարդ, շուն, և այլ, գնա-
ցին, որ ի ծովն ընկնէին, տեսան գորտներն յեզերէն ի ծովն թափե-
ցան, զմիմիեանս յորդորեցին և դարձան, թէ քան զմեզ այլ վախ-
[կոտ] կենդանի կայ: Նմանապէս դու զյուսահատեալ մարդն ի մե-
դաց յոյս դիր և շատ օրինակ բեր և խրատ տուր ի գրոց և փոխէ ի
բարին: Կապիք՝ մեմուն. մարդ գնաց ի մայրին, բազում մանր կօշիկ
կամ գտակ հետ իւրն, նոքա փախան, ի ծառն ելան, մարդն զիւր կօ-
շիկն հագաւ կամ ի գլուխն եղ և թագեաւ, նոքա ի վայր եկին, ամէն
կօշիկ հագան և ի գլուխն եղին, ի վերայ վագեաց և զամէնն բռնեաց:
Նմանապէս դու զմեղաւորն բազում և զանազան կերպիւ խրատէ,
մինչ ի բարին կալնուս և փոխես: Գայլերն ասացին առ ոչխարն, թէ
շունն ու հովին ի միջի չէր, մեք ու դուք հաշտ [է]ինք, զնոքա ի վեր
կալէք, որ մեք ու դուք սիրելի և աղբեր լինինք, յօրժամ արարին,
զամենայն կերան: Նմանապէս հերձուածողք կամ այլ չար ոք զքեզ
խաբէ ոչ:» (անդ):

«Իսկ ըստ փոխաբերութեանն՝ խրատուց արինակք, որպէս
նապաստակացն եւ գորտուցն եւ կամ կապկացն եւ կամ գայլոցն եւ
ոչխարացն»¹³:

¹² Այս մասին տե՛ս նաև Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխա-
տությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 351:

¹³ Ն. Աղոնց, անդ, Ստեփաննոսի Սիւնեցոյ մեկնութիւն քերականին, էջ 187:

«Լեզուաց. .. առձեռն բացատրութեան»¹⁴ պահանջը քերականը մեկնաբանում է՝ դարձյալ հետևելով Առաքել Սյունեցուն. «Աւգտակար է, որ մարդ զամենայն ազգ լեզու գիտէ, և առաւել, որ զհայ ազգիս զանազան լեզուն» (անդ, 89բ- 90ա)¹⁵: Նույն աղբյուրից է ընդօրինակված նաև բարբառային խմբերի նկարագրությունը, սակայն փոքր-ինչ փոփոխված աշխարհագրությամբ (անդ, 90ա): Ինչպես հայտնի է, բարբառների դասակարգման առաջին փորձը պատկանում է Ստեփանոս Սյունեցուն, որը բարբառները բաժանել էր ուստանիկ կամ միջերկրյա և եզերական խմբերի, հետագայում Առաքել Սյունեցին փորձել էր պարզաբանել եզերականների տեղադրությունը¹⁶: «Լուծմունք»-ի հեղինակը, հիմնականում կրկնելով Առաքելի տվյալները, որոշ ինքնուրույնություն է ցուցաբերում. նա չի հիշատակում եզերական բարբառների, այսպես կոչված, 7-րդ՝ «Արցախային» խումբը, փոխարենը՝ Սյունիքից հետո թվարկում է ներքին տեղանուններ՝ «Վայու ձոր, Տաթև եւ այլն», ապա նաև՝ նշում հիշյալ աղբյուրներում բացակայող «Արցխէ քաղաքը» և «Վրաց տունը» (անդ):

Վերծանության բաժինը ևս կառուցված է Առաքել Սյունեցու քերականության հիմքով՝ տեղ-տեղ բառացի ընդօրինակությամբ, այսպես՝ «Դավթյան քերթության» պատառիկը իբրև «քաջոլորակ»՝ հարուստ ելևէջներով բանաստեղծության նմուշ, քերականը մեկնել է նույնությամբ՝ որոշ ազատություն թույլ տալով միայն բառընտրության մեջ¹⁷ (օրինակ՝ պարզեցված է վիպերգության հերոսուհու արժանիքների նկարագրությունը՝ «զկինն ողջամիտ էր, չէր բոգ, աշխարհաշէն, տնաշէն» (անդ, 90բ), փխ.՝ «էր խիստ պատշաճաւոր, շինարար և ողջամիտ կին»¹⁸ և այլն):

Առոգանության նշանների՝ ոլորակի և կետի մասին հիմնականում հաղորդվում են հայտնի տեղեկություններ, ինչպես օրինակ՝

¹⁴ Ն. Արմնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 1:

¹⁵ Հմմտ. *Առաքել Սիւնեցի*, անդ, էջ 81-82:

¹⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, անդ, էջ 181, 306:

¹⁷ Տե՛ս նաև անդ, էջ 350-51:

¹⁸ Հմմտ. *Առաքել Սիւնեցի*, անդ, էջ 89:

շեշտի և հարաշեշտի զանազանումը հունարենի հետևողությամբ (91ա), որ կարող է վերագրվել այս կամ այն քերականին: Կետադրական նշանների հարուցած դադարները հեղինակը որոշել է շնչի տևողությամբ, ըստ այդմ՝ ստորակետը պահանջում է փոքր շունչ առնել, միջակետը՝ հոգի առնել (անդ). Սրանք կարելի է համարել նախորդ քերականների տված բնութագրումների ինքնուրույն ամփոփում (հմմտ.՝ Անանուն Մեկնիչ. «միջակետն կոչի նշան ոգի սակս ընդունելոյ»¹⁹):

«Հագներգության» վերաբերյալ (տադ, բանաստեղծություն) Առաքել Սյունեցու հինգ մեկնաբանություններից քերականը ընտրել է երկուսը՝ այսպես կոչված՝ «կատակերգությունը» և «գավազաներգությունը»: Առաջինը թվում է սխալագրության հետևանք, դեռևս Թարգմանիչը հագներգությունը դիտել է կարկատուն խոսք²⁰, որից էլ «կարկատերգություն»²¹: Մեկնողական գրականության մեջ «կատակերգություն» եզրույթը կայունացած չէ և նաև չունի որոշակի ըմբռնում. Եսայի Նչեցին թեև գործածում է այն, սակայն հավատարիմ մնալով Թարգմանիչից ավանդված նշանակությանը՝ բացատրում է իբրև «կարկատուն բանք»²², Առաքել Սյունեցին խորացնում է խզումը հին ու հետագա ըմբռնումների միջև և եզրույթը բացատրում «որպես կատակն, որ զբանն հեզնեն եւ ծաղր առնեն զմարդ»²³, այս մեկնաբանությունը կրկնում է նաև մեր քննության առարկա քերականության հեղինակը (անդ, 91ա): Հաջորդ «գավազաներգությունը», ըստ Թարգմանիչի, երգն է «սարդենի մահակով»²⁴, որին մեկնություններում վերագրված է առասպելական ծագում²⁵.

¹⁹ Ն. Աղոնց, անդ, Անանուն Մեկնիչ քերականին, էջ 130:

²⁰ Տե՛ս անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, Ն. Աղոնց, Երկեր, հ. Գ, Ե., 2008, էջ 4:

²¹ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Սիրումէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 1169:

²² Տե՛ս Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Ե., 1966, էջ 80:

²³ Առաքել Սյունեցի, անդ, էջ 97:

²⁴ Տե՛ս Ն. Աղոնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 4:

²⁵ Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, անդ, էջ 156: Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականին, Ե., 1972, էջ 83-84 նն:

«Լուծմունք»-ի հեղինակը որոշ կրճատումներով վերարտադրել է Սյունեցու տեքստը²⁶.

«Ասեն, թե Ապողինար աստուածն հետ կուսի ի միոյ էած, որ շնայր և իւր կին առնէր [զնա: Իսկ կոյսն այն] փախեալ, [եւ այլ] աստուածքն խղճացին [կուսին], գերկիր բացին և կոյսն յերկիր մտաւ և պրծաւ [=գերծաւ] և յայն պատռուածոյն այս անուշահօտ ծառս բուսաւ [սարդենիս, զոր «հագնի» ասէին: Այս բուսաւ ի յիշատակ կուսին՝ որպէս կուսութիւնն միշտ կանաչ է եւ ոչ թոռումի, եւ սրբութիւնն անուշահոտ է, այսպէս եւ ծառն այն միշտ կանաչ է եւ անուշահոտ: Եւ յայն ծառէն գաւազան գուգեցին], վասն այն ամէն տարի զայն գաւազանն ի ձեռն առնուին, և զայս [երգս] երգէին եւ ի մէկ մէկի յուս ելանէին [եւ զայս երգս երգէին: Եւ զայս երգս ԻԴ. ճառ արարին] եւ յերկու գիրք բաժանեցին՝ ԺԲ. ճառ ի մին գլուխ եւ ԺԲ. ի մին գլուխ, որ զանխով և զթաքուն և յերկար չերնի, և տղայքն յուսահատին և չկարդան: Մին գրոց անունն Ելիակոն, և մինն Յօղիսակոն» (անդ):

Թերի, տեղ-տեղ նաև խառնակ շարադրանքով է տրված տառի և վանկի նկարագրությունը: Հնչյունաբանության մեջ քերականը կարծես ընդունում է տառերի ու թվերի միաստիկ գուգակցումները, որոնց տուրք էր տվել Առաքել Սյունեցին, բայց բավարարվում է կցկտուր տեղեկություններով, որոնք չեն պարզաբանում նյութի էությունը, այսպես, օրինակ, առանց սկզբնաղբյուրի իմացության, հենվելով միայն «Լուծմունք»-ի տվյալների վրա՝ անհնարին է հասկանալ, թե ինչու են լ և գ հնչյունները «արու» կամ ը-ն «քառանգինի» (անդ)²⁷: Տարտամ է նաև վանկի և փաղառության տարբերությունը, «Յաղագս վանգի» վերնագրի ներքո խոսվում է փաղառությունից (անդ, 91ա-բ), ինչպես Թարգմանչի քերականության մեջ, այսինքն՝ հաղթահարված չէ հայերենի քերականության ամենավաղ և հետագայում բազմիցս պարզաբանված հակասություններից

²⁶ Կրճատումները վերականգնված են անկյունավոր փակագծերում:

²⁷ Հմմտ.՝ *Առաքել Սյունեցի*, անդ, էջ 99-100:

մեկը²⁸: Այս շփոթն ավելի ակնառու է դառնում հետագա շարադրանքում, երբ փաղառության ներքո բերվում են վանկի երկար և սուղ տեսակները (անդ, 91բ):

Բառի և բանի կազմության՝ շաղաշարության վերաբերյալ նախորդ մեկնություններին հեղինակը նոր բան չի ավելացնում (անդ, 92ա). նշելի է միայն, որ այս հատվածի օրինակները՝ Հոմերոսի տաղի վերլուծությունը, Պատրոկղեի, Աքիլլեսի, Նեստորի մասին զրույցները, վերցված են Դավիթ Քերականից²⁹:

Հաջորդ՝ «Յաղագս բառի» վերնագրի ներքո, հավանաբար անփութության հետևանքով, տրված է բանի սահմանումը. «Ասացուած, որ յիրմէ ասումն, և որը զայլոց ասէ ամենայն բառեր իրար կապած» (անդ), իսկ բանի մասին շարադրանքում կցկտուր՝ մի քանի օրինակով հիշատակված են նրա տեսակները. «Անուն՝ Պօղոս, Պետրոս, Բայ՝ եկ, բեր, տար եւ այլն» (անդ): Այդուհանդերձ, բուն սահմանումը ուշագրավ է և՛ այն պատճառով, որ բանի ավանդական ըմբռնումը ձևակերպվել է նորովի, և՛ որ նրա կապակցական հատկանիշն օժտվել է ավելի տարողունակ բովանդակությամբ: Նախ, ինչպես նկատելի է, ինքնին կամ «ինքնակատար» միտք արտահայտելու կարողությունը, որ նշել էր Թարգմանիչը³⁰, պարզեցված է՝ իբրև «յիրմէ ասումն», բացի այդ՝ ի տարբերություն Թարգմանչի և առաջին մեկնիչների, որոնք կապակցությունը սահմանափակում էին սոսկ շարադասությամբ³¹, տրված է ընդհանուր ձևակերպում՝ «բառեր իրար կապած», ինչը կարող է ենթադրել նաև կապակցության այլ եղանակներ՝ խնդրառություն, համաձայնություն:

Խոսքի մասերի փոքրիշատե համակարգված տեսություն «Լուծմունք»-ը չի առաջադրում, դրանք չունեն ամբողջական սահ-

²⁸ Գ. Ջահուկյան, Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը, էջ 252, *Եսայի Նշեցի*, անդ, էջ 93 և այլն:

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 253-54:

³⁰ Տե՛ս Ն. Աղոնց, անդ, Արուեստ Դիոնիսեայ քերականի, էջ 12:

³¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, էջ 191:

մանումներ, կա՛մ բնորոշվում են առանձին հատկանիշներով, ընդ որում՝ գրեթե առանց մեկնությունների, կա՛մ բոլորովին զուրկ են տեսական հիմքերից: Մինչդեռ օրինակներին և դրանց բացատրություններին մեծ տեղ է տրված, ինչը ցույց է տալիս, որ տեսական ընդհանրացումներից առավել կարևորված են կիրառական հմտությունները:

Խոսքի մասերի նկարագրությունից հիշատակելի են հետևյալ դիտարկումները: Անվան և բայի ծագման հաջորդականության և ըստ այդմ՝ գերադասության հարցը, որ արծարծվել է առաջին մեկնություններից սկսած³², քերականը լուծել է հոգուտ անվան՝ «յառաջ մարդ անուամբ եւ ապա գործ» (անդ):

Անվան համար նա առանձնացրել է երկու հատկանիշ՝ «գոյացութիւն» և «որակութիւն». «Գոյացութիւն է, որ բաղկանայ, եւ որակութիւն» (անդ). սրանք բացակայել են Թարգմանչի սահմանման մեջ, հետագայում նկատի է առնվել միայն գոյացության հատկանիշը, իսկ ամբողջական ձևակերպումը տրվել է լատինաբան քերականության սկզբնավորման շրջանում՝ Հովհաննես Քոնեցու կողմից (ԺԴ. դ.)³³:

Դերանունը բաժանված է հետևյալ տեսակների՝ «Փոխանակ անուան, այլ անուն կամ թերի անուն» (անդ, 92բ): «Փոխանակ անուան»-ը և «թերի անուն»-ը փոխանականություն և թերանուն ձևերով վկայված են Դավթի քերականության մեջ, որը ճանաչում էր նաև հասարակ անունը³⁴: Մինչդեռ «այլ անուն»-ը նախօրինակ չունի և կարող է համարվել «Լուծմունք»-ի նորակազմություն: Քանի որ այս տեսակների թվարկմանը չի հաջորդում մեկնություն, պարզ չէ՝ «այլ» և «թերի» բնորոշումները տարբերակվա՞ծ են որպես առանձին եզրույթներ, թե՞ շաղկապված են որպես հոմանիշ ձևեր, որոնք

³² Տե՛ս Գ. Ջահուկյան, անդ, էջ 139, 166 նն:

³³ Տե՛ս Ս. Սիրունյան, Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները // «Բանբեր Մատենադարանի» 24, Ե., 2017, էջ 123-134:

³⁴ Տե՛ս Գևորգ Ջահուկյան, «Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը», էջ 261:

անվանում են միևնույն տեսակը: Երկու վարկածներն էլ նկատի առնելով՝ կարելի է ասել, որ հեղինակը դերանունը դիտել է իբրև անվանը փոխարինող բառ, որը այլ անունով և / կամ թերի կերպով կատարում է անվան դերը:

Այսպիսով, մեր քննության առարկա «Լուծմունք»-ը, ինչպես հիշատակված աղբյուրներից պարզ դարձավ, նշանակալի չափով հենվում է Առաքել Սյունեցու աշխատության վրա և նաև պարունակում տեղեկություններ այլ քերականներից: Քերականության բաժիններն ունեն սեղմ շարադրանք, որը, սակայն, բավարար խնամքով մշակված չէ, տեղ-տեղ հիշեցնում է հապճեպ սղագրություն: Հասկացական մակարդակում էական նորություններ չկան, հեղինակի ինքնուրույնությունը սահմանափակվում է ավանդական ըմբռնումների վերաձևակերպումներով, որոնք երբեմն կարող են հանդես բերել իմաստային որոշ տարբերություններ, աշխատությունն օժտված չէ մեկնողական մանրամասներով, փոխարենը մեծ տեղ է տրված օրինակներին ու զրույցներին: Հաշվի առնելով նյութի մատչելի մատուցման ընդհանուր միտումը³⁵, կարելի է ենթադրել, որ ԺԵ. դարի այս «Լուծմունք»-ը ստեղծվել է կիրառական նպատակով՝ որպես տեսական գիտելիքներն ամրացնելու օժանդակ ձեռնարկ:

Ключевые слова: рукопись, Аракел Сюнеци, грамматика, Матена-даран, рукопись грамматики.

Сирунян Т. Г. - Исследование одной грамматической рукописи (XV век)..- В статье исследуется рукопись грамматики хранящаяся в Матенадаране (автор неизвестен), выявляется, что она в значительной степени опирается на труд Аракела Сюнеци, отделы грамматики имеют сжатое изложение, не содержат существенных новинок, вместо комментариев большое место уделяется примерам и беседам. Посему резюмируется, что создание

³⁵ Սա արտահայտվել է նաև լեզվի մեջ՝ բարբառային-խոսակցական ձևերի հաճախակի գործածությամբ. տե՛ս Գևորգ Ջահուկյան, անդ, էջ 351:

грамматики имело прикладную цель – вспомогательное пособие для закрепления теоретических знаний.

Keywords: manuscript, Arakel Syunetsi, grammar, Matenadaran, grammar manuscript.

Sirunyan T. Gh. - A study of one grammatical manuscript (XV century). - The article examines the grammar manuscript (unknown author) stored in the Matenadaran, reveals that it largely relies on the work of Arakel Syunetsi, the grammar sections have a concise presentation and don't contain significant novelties, instead of comments, a large place is given to examples and conversations. Therefore, it is summarized that the creation of grammar had an applied purpose - an auxiliary means for consolidating theoretical knowledge.